ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

« ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ » ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**"CHILDREN'S HOME- AFTER MARY IZMIRLJYAN " STATE NON COMMERCIAL ORGANIZATION OF THE MINISTRY OF LABOUR AND SOCIAL ISSUES OF REPUBLIC OF THE ARMENIA**

---

**« 12 » « Մարտ » 2015թ.** 0-121

***<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ -11/10> ծածկագրով շրջանակային***

***Համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի***

***հնարավոր մասնակիցների ղեկավարներին***

<< ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում << Մարի Իզմիրյանի անվան մանկատուն >> ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել << Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանք ( ներ):

Սույն հրավերի ( ծանուցման) ծածկագիր է հանդիսանում << ՄԻԱՄ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10>

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Մ.Յաղուբյան նրբ. 13 հասցեով, մինչև 2015թ. մարտի 24-ը, ժամը 11:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Ն. Հարությունյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում ըստ ստացման հերթականության ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն << Մարի Իզմիրյանի անվան մանկատուն >> ՊՈԱԿ-ի շենքում, ք. Երևան, Մ.Յաղուբյան նրբ. 13 հասցեով, 2015թ-ի մարտի 24-ին ժամը 11:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում << Մարի Իզմիրյանի անվան մանկատուն >> ՊՈԱԿ-ի կարիքների համար Հանդերձանքի ձեռքբերումը:

<< Մարի Իզմիրյանի անվան մանկատուն >> ՊՈԱԿ-ի կարիքների համար հանդերձանքի մատակարարման ( որոնք կազմված են 1-41 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը,որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի ( ծանուցման ) N 1-4 հավելվածներում :

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում ( Հավելված N 5), ընդ որում պարտադիր է նշել մասնակցի էլեկտրոնային հասցեն,

բ. գնային առաջարկ ( Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՄԻԱՄ-ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքնելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<< Մարի Իզմիրյանի անվան մանկատուն >> ՊՈԱԿ-ի էլեկտրոնային հասցեն է՝ mary.izmirlyan@mail.ru:

Եթե Հրավերով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ ( լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքում: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայաման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրերով հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում,մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան ( կոնկրետ ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթեր և/կամ տվյալներ:
-

Առդի 15 էջ:

*Հարգանքով՝* *Հ. Մկրտչյան*

---

✉ 375037 Մ. Յաղուբյան 13
☎ 20-15--86 20-65-92